Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Քաղաքականությունների լաբորատորիա. կրթական բարեփոխումները Արևելյան գործընկերության երկրներում. համատեղ դասեր, համատեղ ապագա» տարածաշրջանային միջոցառմանը մասնակցելու նպատակով Իտալիայի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

Գործուղվողներ՝

Արաքսիա Սվաջյան

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

Թամար Ալեքսանյան

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի վարչության պետ

Թամարա Սարգսյան

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչության պետ

Գայանե Արզումանյան

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մասնագիտական կրթության և ուսուցման վարչության պետ

Վերոնիկա Խորասանյան

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի վարչության ռազմավարական պլանավորման բաժնի պետ

Գործուղման վայրը և ժամկետները.

ք. Ստրեզա (Իտալիայի Հանրապետություն), 2026թ. հունիսի 23-26

Հրավիրող կողմը.

Եվրոպական կրթական հիմնադրամ (այսուհետ՝ ETF)

Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն ԵՄ կողմից ֆինանսավորվող և Եվրոպական կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Արևելյան գործընկերության տարածաշրջանում կրթական բարեփոխումների և հմտությունների աջակցություն» տարածաշրջանային ծրագրի շրջանակում կազմակերպված «Քաղաքականությունների լաբորատորիա. կրթական բարեփոխումները Արևելյան գործընկերության երկրներում. համատեղ դասեր, համատեղ ապագա» տարածաշրջանային միջոցառմանը:

Քննարկված թեմաները.

Քննարկվել են Արևելյան գործընկերության երեք երկրների՝ Հայաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի կրթական համակարգերում իրականացված բարեփոխումները ծրագրի

ընթացքում: Քննարկումներին մասնակցել են նաև միջազգային փորձագետներ Ֆինլանդիայից, Պորտուգալիայից, Լեհաստանից և Ռումինիայից, ներկայացրել են թեմաներ կրթական համակարգի վերափոխման, 2030-2040 թվականների համար կրթության առաջնահերթությունների, կրթության մեջ տվյալահեն քաղաքականության և կրթության բարեփոխումների կառավարման համատեքստում թափանցիկության և հաշվետվողականության վերաբերյալ:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալը հանդես է եկել «Հայաստանում կրթության բարեփոխումների ուղղությունները և մարտահրավերները» թեմայով ելույթով՝ ներկայացնելով հանրակրթության և մասնագիտական կրթության ոլորտներում Հայաստանում իրականացվող լայնածավալ բարեփոխումների ծրագրերը՝ դրանք համադրելով Եվրոպական կրթական հիմնադրամի նախաձեռնությամբ Հայաստանում արագ կրթական ախտորոշման (Rapid Education Diagnosis, RED) մեթոդաբանությամբ իրականացված և հրապարակված «Հայաստանի կրթության բնագավառի կառավարումը և ֆինանսավորումը՝ ուղղված կրթության հավասար հասանելիության ապահովմանը» զեկույցում արձանագրված դիտարկումների և առաջարկությունների հետ:

Նախարարի տեղակալը ներկայացրել է նաև որակյալ կրթության ժամանակակից պահանջների համապատասխանեցման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, մասնավորապես՝ դասավանդողների մասնագիտական կարողությունների զարգացման, խրախուսման և ուսուցչի մասնագիտության գրավչության բարձրացմանն ուղղված ծրագրերը, կրթության կառավարման և առաջնորդության բարեփոխումները, կրթական ենթակառուցվածքների ստեղծման և գույքով հագեցման աշխատանքներն ու ծավալները:

Պատվիրակությունն առանձին անդրադարձ է կատարել նաև կառավարման լավարկմանը և դրանց շարունակական մշտադիտարկմանը, կրթության որակի գնահատմանն ու վերահսկողությանը, բարեփոխումների ներդրմանը և դրանց արդյունավետ հաղորդակցմանը:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ամփոփիչ քննարկման ժամանակ ԿԳՄՍՆ պատվիրակությունը ներկայացրել է Հայաստանի կրթական համակարգի համար առաջիկա տարիների առաջնահերթ ուղղությունները. հանրակրթության ոլորտում՝ տեղային և համակարգային կառավարման բարեփոխումներ, կրթության որակի վերահսկողության արդյունավետ մեխանիզմների զարգացում և ազգային գնահատման համակարգ, համայնքների զարգացում կրթության մեջ մասնակցության համատեքստում, մասնագիտական կրթության ոլորտում՝ հաստատությունների արդյունավետ կառավարում, առանձին մասնագիտացումների ուղղությամբ ռեսուրսային միավորների ստեղծում, Որակավորումների ոլորտային շրջանակի զարգացում մասնավոր ոլորտի հետ համագործակցությամբ:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջիկայում նախատեսվում է հոկտեմբեր ամսին մասնակցել տվյալների ռազմավարական կիրառման վերաբերյալ հանդիպումներին, ինչպես նաև՝ Թուրինում կազմակերպվող «Արհեստական բանականությունը արագ զարգացման համար» թռիչքաձև կրթական բարեփոխումների հանդիպմանը: Նոյեմբերին Թուրինում նախատեսվում է նաև կազմակերպել ամփոփիչ աշխատարան «Հայաստանի կրթության բնագավառի կառավարումը և ֆինանսավորումը՝ ուղղված կրթության հավասար հասանելիության ապահովմանը» վերը նշված կրթության արագ ախտորոշման զեկույցում առանձնացված թեմաների շուրջ՝ բոլոր ԱԼԳ պետությունների մասնակցությամբ:

Հաշվի առնելով, որ 2024 թվականի մայիսից մեկնարկած եռամյա ծրագիրը մոտենում է ավարտին՝ միջոցառման ընթացքում քննարկվել են նաև ծրագրի շարունակականության, հայեցակարգի և հետագա փուլի բովանդակության հետ կապված հարցեր: Այս համատեքստում առաջարկվել է առաջիկա փորձի փոխանակման և համագործակցության ծրագրերում ներառել ինչպես վերոնշյալ, այնպես էլ՝ Արհեստական բանականության և թվայնացման տարբեր ասպեկտների, տվյալահեն ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի, բարեփոխումների ներդրման և կիրառման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրեր և թեմաներ: Համագործակցության բարելավման իմաստով առաջարկվել է պարբերաբար մասնակից երկրների միջև կազմակերպել ոլորտների և բարեփոխումների համադրելիության քննարկումներ, կրթության ոլորտի համանման գործակալությունների փորձի փոխանակման հանդիպումներ և համատեղ հետազոտական և քաղաքականության վերլուծության նախագծեր:

Ստորագրությունը, ամսաթիվը.

Արաքսիա Սվաջյան

Թամար Ալեքսանյան

Թամարա Սարգսյան

Գայանե Արզումանյան

Վերոնիկա Խորասանյան

29 հունիսի 2026թ.